

ՏԵՐ ԵՒ ՏՆՈՒՄ

Ե. ԹՈՐՈՏՅԱՆ

Նամակ կամ որևէ

գրութիւն պետք է ուղղել առ

Տեղիւն ԱՐՇԱԼՈՅՍ քաղաքի

ՔԱՇԻՐԷ (Կահիրէ)

Թի.


E. TOROSSIAN

Diréc.-propr. du journal arménien

ARCHALOUICE

LE CAIRE (EGYPTE)

Boîte Postale No.



Լ Ր Ա Պ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՐ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՒ ՀԱՄԱՐ	
Տարեկան ողջ դրամ	60
Վեցամսեայ »	35
ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐ	
Տարեկան Յոնսիք	20
Վեցամսեայ »	12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ ԿԱՆԿԻԿ ԵՒ ԹՂԹԱՍԱՐԻ ԾԱԽՔՔ ԽՈՐԱԳՐՈՒՄԵԱՆ ՎՐԱՅ Կ՝

Խոբագրութեան ուղղուած չորսթիւնի քէ չ'են տրուիր

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ Կանխիկ վճարելի են

ԲԱՐԵԿՐԹՈՒԹԵԱՆ ՊԱԿԱՍԸ

(Շարն . նախորդ թիւէն և վերջ)

Ուրեմն եթէ բուն վախճանը կը յայտնենք իբր գարգայեալ մի ազգ գեղեցիկ լուսապարկով մը ներկայանալ մարդկութեան, այն ատեն անխոստաբեր ճարտար պէտք է համարենք, որպէս զի մեր մէջ գոյութիւն ունեցող վաճառական թէ սեղանաւոր լեզուագէտ թէ օրէնսգէտ . եկեղեցական թէ վարժապետ . բժիշկ թէ դերասան . նկարիչ թէ երաժիշտ ինչպէս նաև ամեն դասակարգի արհեստաւորներ նախքան հրապարակ նետուիլը, անգամ մը բարեկրթութեան տաճարը մտնեն, ուրտեղ իրենց ասանդուելիք գասերը լաւ մը ուսումնասիրելէ յետոյ իրենց գոյութեան պայքարը մղեն մարդկային ազգին դէմ . ու այնուհետեւ քաղաքակրթութեան գերուիլը առնելու պատրաստուին:

Շարք մը օրինակներով ասանուած է թէ՛ բարեկրթութեան պակասը մեծածն ու միանգամայն անբարեկարգ ինչպէս ինքնուրուի գործած է մեր մէջ . որուն շնորհիւ աւերումներ ու շահատակութիւններ միշտ անպակաս եղած են . քրտնաթոր աշխատութեամբ և անբացատրելի զոհողութեամբ հազիւ հազ կենդանի գրութեան մը վերածուած հանրային բարենպաստիկ ձեռնարկները միանգամ ընդ միշտ վտանգուած ու քանդուած են . յետոյ, մենք ալ ուրիշ բան չ'ենք ունեցած ընելիք՝ բայց եթէ լալ ու ողբալ և միևնոյն ատեն յուսահատ մնալ այս ախուր իրականութեանց առջև:

Այո՛, ոչ թէ ենթադրութեան և կամ հաւանականութեան վրայ հիմնելով, այլ որոշապէս, կատարեալ լի ու լի համոզումով կրնանք շեշտել թէ՛ մեր բարեգործական հաստատութիւնները միշտ մնառուած են ի ճնորհս անոնց մէջ սպրդող անբարեկրթ ժողովականաց:

Ու և է մի ընկերութեան սովորական նստի մը մէջ, երբ գաղափարային բաւական կնճռոտ խնդիր մը սեղանին վրայ կը դրուի և լուրջ քննադատութեան մը առարկայ կը լըլայ, այդ պարագային, երբ ժողովականք զերար չհասկնան, փոխանակ լուրջ կերպով վերաբերուելու մէկմէկու հետ, յանկարծ նիւթէն կը շեղին, կը մտնան ամեն մարդավարի ձեակերպութիւններ, և կ'ըսկրին անձնուորութիւններ վերաւորել մէկ զմէկ անձաններու անզատարարով մը պատուելով . ալ հայհոյանք ու նախասինք

իրը ընթացիկ դրամ կը գործածուին իրարու դէմ: ականջները կը սրբապղծուին և ընկերութեան նսեմացումն ու խախտումը մտաւրտ կը լինի: սրովհետեւ ոգեւարի ձեռնկր սկսած է յորդոյ ժողովականաց մէջ. իսպառ մոռցած են իրենց կաշուքը . ալ հիմայ խել մը անմարտելի յաւանական անձակաւնեւոր Բո-քուռի մը կայ մէջտեղը, որ բոլոր անվայել հեղինակութիւնը ունի իր մէջը:

Ու յետոյ . . .  
Յետոյ քայքայումի քայլերդն է որ կը հնչէ կատարեալ ներդաշնակութեամբ, ալ ուրիշ բան չ'են ունենար ընելիք այդ հայ աթոռակալները՝ բայց եթէ ծինելու զին մարել, դուռերնին դուրսը ու մէկ կողմ քաշուելով հրէշային ժպիտով մը իրենց աւերումները դիտել:

Արդահատելի երեւոյթ մ'ալ յակայն կը ներկայանայ մեր առաջ, երբ կը տեսնանք և կամ կը լսենք թէ՛ շատ անգամ կարգ մը ժողովականներ ամեն ակնածանք ու պատկառանք կանց ասանելով ժողովներու կը ներկայանան, կրան վաւերուի ինչ ազգեցութեանն զնորած, միտտ կանթեղներնին վառած, լուսեղէն ու հրեղէն երազներու մէջ կէս քնն կէս արթուն:

Ի՛րեւս առաջարկուի թէ, զգացումնին մարած այս դասակարգի լեշնայիները անպատճառ խրախճանատեղի մը երթալու պէտքը ունենան . սակայն սխալ ըմբռնում, սխալ դատողութիւն:

Վերջ տալով մեր գրութեան, ի մի բան՝ զգանք այդ անզգին պակասը որ կայ ու կը մնայ մեր մէջ . աշխատինք ուրեմն կրթութիւն, ու կրթել նաև մեր ապագայ նոր սերունդը . որպէսզի այն ատեն չի վարանինք երբէք հաւատալու թէ թշուառութեան ուրուականին փաթտուած մեր դժբաղդ Ազգին ազատումը մտաւրտ կ'երեւի և այն ատեն մենք ալ իսպառ պիտի գաղթինք անիծելէ այն սեւ ճակատագիրը որ դարերէ ի վեր սաւառնած է Հայերու ճակատին վրայ:

Ք.

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹՂԹԱՔԵՐ

ՅՈՒՆԻՍ 14 Ը

ՓԱՐՈՊ ՄԷՂ

Յուլիս 14 ի կամ Հասարակապետութեան տօնին վրայ այնչափ բաներ գրուած են մեր թերթերուն մէջ . որ մենք աւելորդ կը համարինք

կրկնութիւններ ընելու անպատեհութեան անչ իմնալ:

Սակայն եթէ պարզ տարբերութեւ մէջ Ֆրանսայի Ազգ . տօնը միօրինակութիւն մը ունի, ցուցանանդէսի ժամանակ բոլորովին տարբեր գոյն մը կ'առնու . այսպէս եղաւ այս տարի: Բայց այնչափ բան կայ պատմելու որ մենք բոլորովին չուարած ենք . թէ ո՞ր կողմէն սկսելու է: Բայց սկսինք ուրբ՝ օրէն (Յուլիս 13) . յիշաւի այդ իրիկունէն կ'սկսի տօնը և կը տեւէ երեք օր: Ուրբաթ իրիկունէն սկսեալ Բարեգի բոլոր թաղերուն մէջ՝ 5-9-10 տեղեր ժողովրդական և հասարակաց պարահանդէսներ սկսան, ամբողջ Բարեգի մէջ մի քանի հարիւր այգախի ժողովրդական պարահանդէսներ կային: բոլոր ժողովուրդը՝ կին և մարդ, ազգիկ և տղայ իրարու փաթտուած կը պարեն մէնչեւ առաւօտեան ժամը 2 ք կամ 3 ք եւ զուցէ աւելի ուշ: Ամեն կողմ կը լսուին հրացանաձգութիւններ հրախաղութիւններ, խաղալիք տուժերու . պայթումներ երգեցողութիւն . նուագածութիւն, կատակերգութիւն, պոստալ գոջուլ, ժողովուրդի երթեւեկութիւն . . . մէկ խօսքով անպատեհ իրարանցում:

Երկրորդ օրը՝ Յուլիս 14 ն է, այսինքն բուն տօնի օրը: Ժամը տասնէն սկսեալ կամաց կամաց իրարանցումը և ոգեւորութիւնը դարձեալ կ'սկսի, վայրկեան առ վայրկեան կը լսուին նուագածութիւններ, կրողներու խմբեր, հրացանաձգութիւն, միևնոյն երեւոյթը քան նախորդ իրիկունը, բայց այս առաւօտ ամբողջ շատ աւելի բազմաթիւ է . փողոցները, բուլվարները, հրապարակներն ամբողջով լիքն են: Բայց այդ դեռ ոչինչ է . վասնզի ամառուան սարսափելի տաքը կ'արդիւլ խնթութիւններ ընելու:

Ժամը 3 ին Լոնտոնի ընդարձակ դաշտին վրայ տեղի կ'ունենայ զօրահանդէսը այս տարի՝ միշտ ցուցանանդէսին շառիւղ աւելի շքեղ եղաւ այս տօնը, վեց հարիւրէն աւելի անձինք այն տեղ գնացեր էին Ֆրանսական բանակը զիտելու: Այն տեղ տեղի ունեցան մի քանի աննշան ցոյցեր և այդ անպատճառ լինելու էր, չէ՞ որ Ֆրանսացին անպատճառ «կեցցէ կամ անկցի» պէտք է պոսայ:

Զօրահանդէսէն յետոյ վերադառնանք Բարեգի, արգէն ճաշի ժամանակ է, կերակուր տեսնենք և դուրս ելլենք: Փողոց ելլելուք պէս, բառի բուն նշանակութեամբ, բոլորովին կ'ազնիւ վասնզի բոլորովին նոր քաղաքի մէջ կը գտնու ինքզինքդ, այն ինչ լուսավառութիւն, ինչ բզմութիւն, ինչ իրարանցում է . զլիաւոր փողոցներէն անցնելու համար խնայափառի պէս քալելու է, այնքան շատ է բազմութիւնը, բաւական լինի մեզ ըսել որ Յուլիս 14 ի առթիւ Բարեգի ժողովուրդը կրկնապատկուած էր՝ դեցուք 5 միլիոնի վերածուած:

Բոլոր պաշտօնական շէնքերը, անհատական տուները, բուլվարները հրապարակները լուսավառուած են, անթիւ անհամար լոյսերով, լապտերներով, գրօշակներով զարդարուած են փողոցներու ծառերուն վրայ թղթէ անհամար լապտերներ կախուած են, տեսքը հիաստուգի և գիւթիչ է:

Այսպիսի լուսավառութիւն մը մենք բնաւ չէինք տեսած Բարիզի մէջ, ոչ 89 ի ցուցանանդէսի ժամանակ եւ ոչ ալ Ռուսիոյ Ինքնակալին Բարիզ գալուստն առթիւ այգպիսի շքեղութիւն կար:

Արդեօք քանի՞ հարիւր միլիոն լոյս կար այդ գիշեր ամբողջ Բարիզի փողոցները (առանց հաշուելու առնետուն մէջ եղածները եւ ցուցահանդիսինը): Բարիզի քաղաքապետութիւնը՝ այս տարի Ազգ. տօնին համար 300,000 ֆրանքէ աւելի քուէարկած էր, աւելի շքեղութիւն տալու համար:

Բայց այսպէս թէ այնպէս արդէն ժամը 9 նն է հրախաղութիւնները կ'սկսին գլխաւոր չորս կեդրոններու վրայ, ամբողջ մէկուկէս ժամ անընդհատ (9 էն մինչեւ 10 1(2) ր) տեւեցին հրախաղութիւնները, անկարելի է պատմել ատոր գեղեցկութիւնն ալ... Գոնցօրտի հրապարակին վրայ միայն մօտ մէկ միլիոն ժողովուրդ խուռած էր թիւլըրի պարտիզին հրախաղութիւնները դիտելու համար ժամը 10 1(2) ին, հրախաղութեանց վերջնայէն յետոյ երբ ժողովուրդը ցրուի սկսաւ, բազմութիւնը այնչափ շատ էր որ մօտ 200 անձինք խեղդամահ եղան եւ սեղախոխուեցան զանազան գեղատուններ, բարերարտարար մահ չի պատահեցաւ: Այս երրորդ անգամիւ մէկ դարէ ի վեր որ այգպիսի արկածներ կը պատահին հրախաղութեանց ժամանակ, Լուի-Ֆիլիպի թագաւորութեան ժամանակ, Նաբոլէոն Գ. ի ժամանակ եւ 1900 ի Յուլիս 14. խեղդամահի դէպքեր պատահեցան:

Հրախաղութիւններէն յետոյ մինչեւ առաւօտեան ժամը 4-5 ր ամեն տեղ պարահանդէս ուղեւորութիւն, երգ, նուագածութիւն եւ կոնծում... Սրճարանները, գինեառները ամբողջ երէք օր երեք գիշեր իրենց խանութները չեն քուցեր եւ... ոսկիի գործեր կ'ընեն:

Յուլիս 15 ին միւսնոյն բաները կը պատահին բայց աւելի նուագ փայլով: Ահա այս է համառօտ կերպով, Փրանսայի Ազգ. տօնին նրկարագութիւնը:

Մ.Մ. ԴԱԼԻՉ ԲԷԿ

### ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Լը քարիէ սիւ Նիլի Ա. տարի 30 րդ. թուոյն մէջ հետեւեալը կը կարգանք:

« Կը տեղեկանանք թէ՛ նորին Բարձրութիւն Իշխան Գուրտան Լուսինեան Սէնդ-Գաթէրինի պատուանշանին ասպետութեան (կրօս Շուայիէ) աստիճանն շնորհած է Տ. Առաքել Փափագեանի »:

« Այս շլացուցիչ պատիւը, կ'ըսէ Գուրտիէ սիւ Նիլի յարգոյ խմբագիրը, ճշմարիտ վարձատրութիւնն է այն անխնայ անձնուիրութեան՝ որ յիշեալ երիտասարդը եւ ակնաւոր հայը՝ ցոյց տուաւ իւր Հայրենիքին »:

Նորին Բարձրութիւն Իշխան Գ. Լուսինեանի այս շնորհը պարտաւոր կ'ընէ ըզմեզ շնորհաւորել պատուընկալ հայ երիտասարդը եւ իրաւունք կուտայ յուսալ միանգամայն թէ՛ Ն. Բ. Իշխան Գ. Լուսինեան, որոյ աստիճաններ շնորհելու առատաձեռնութիւնը մինչեւ ց'արդ անձանօթ էր ամենուն ալ, յետ այսու շնորհ պիտի ընէ Եգիպտոսեան հայոց շատերուն բարի նախանձը շարժել, իրենց կուրծքերուն վրայ կրել փափաքելու համար ասպետութեան պատուանշանը. եւ կարծենք՝ ասիկայ քաջալերութիւն մը պիտի ըլլայ որ Եգիպտոսահայոց շատերը հետամուտ ըլլան բարիք գործելու, Որբախնամներու ժողովոց անգամակցելու եւ վերջապէս բարի ըլլալու, նորին Բարձրութեան Լուսինեան Իշխանի շնորհաց արժանանալու փափաքով:

ԽՏԻՎԸ. — Կրօնական աշարողութիւն մը կատարուեցաւ Բաւ-Էլ-Թիւնի պալատին մէջ, Ն. Բ. Խտիվին կատարեալ առողջութեան համար, Աղէքսանդրիոյ կառավարիչը ներկայ կը գտնուէր:

Ն. Բ. Խտիվը Տիվօնը թողուց զբ տեղ տան եւ ութ օրեր մնացած էր եւ հիմայ լեբան մէջ պոռոյններ կը կատարէ:

Ն. Բ. առողջութիւնը կատարելապէս բարւոքուած է: Խտիվը Սուլթանին շնորհաւորական ձեռագիր նամակ մը ուղարկեց իւր առողջութեան մասին տեղեկութիւն առնելու համար Սուլթանին ունեցած հոգածութեանը համար:

ՀՆԻԿԱՍՏԱՆԻ ՍՈՎԸՐ. — Հնդկաստանի սովեալներուն ի նպաստ Գահրէի մէջ կազմուած գովիթէն ուրիշ գովիթէներ ալ կազմած է՝ որոնք արտօնեալ են հանդանակութիւններ բանալ, դրամ հաւաքել եւ գիւղերու մէջ գօթիթէին կաշմակերպած 6000 անգղ. ոսկւոյ վիճակահանութեան տոմսակները ծախել:

Հնդկաստանի Սեֆոէթն Տ'էրան յուլիս 14 թուականու հետեւալ հեռագիրը ստացաւ: Կեդրոնի նահանգներուն մէջ առատ անձրեւներ տեղացին. յոյս կայ որ սովը վերջանայ. բայց կարօտեալներուն թիւը 6 միլիոնէն աւելի կը բարձրանայ. դարձեալ Քոլերան մեծամեծ ջարդեր կ'ընէ 10,000 Գոլերայի դէպքի վրայ 6500 ը մեռած են:

ՄԱԹԱՐԻԱՅԻ ՀՐԻՉՅԱՆԻՆԻՐԸ. — Կառավարութիւնը 320 ոսկի շնորհեց Մաթարիայի գեղաւրդ հրկիզեալներուն, որոնք առանց պատասխարանի մնացած են:

ԵԳԻՊՏՈՍԻ ԱՌԱՋՆՈՐԳԸ. — Յուլիս 18 ին Այվազեան եպիսկոպոս Կ. Պոլիսը թողլով Տարտանել մեկնած է ինչ ինչ վիճակին գործեր կարգադրելու համար:

Ս. Գրիգոր Լուսաւորչի տօնին օրը խուռն բազմութեան մը ներկայութեան, խաչահանդիստով եւ անգաստանով կատարած է տեղւոյն գերեզմանատան օրհնութիւնը որ մինչեւ ց'արդ շրջապատ չ'ունենալուն, ոտից կոխան եղած էր եւ բարեպաշտ Տիկնայքնկատելով այս անպատեհութիւնը երեք տարիներէ ի վեր շարժական գոյղն տուրք մը հաստատելով իրենց մէջ, յաջողած էին պատ մը քաշել գերեզմանատան շուրջը:

— Տեղւոյն նորակառոյց Ս. Գեորգ եւ կեղեցւոյն շինութեանէն դոյացած 400 ոսկւոյ պարտոց բարձման համար, պատուաւոր երիտասարդներէն վեց հոգիէ բաղկացեալ « պարտոց բարձման յանձնաժողով » մը կազմած է...:

Ռոտտոթոյի Գեր. Առաջնորդը՝ անտի էզլինէ մեկնած է այն տեղի գործերն ալ կարգադրելու եւ քահանայ մը ձեռնադրելու համար:

Շատեր կը կարծեն թէ Յովսեփ Եպիսկոպոս Եգիպտոսի վիճակին առաւելութիւններէն շլանալով Ռոտտոթոյի Առաջնորդութիւնն ձգելու պահուն, վրայ կուտայ նաև Ռոտտոթոյի Առաջնորդութիւնն՝ որ տեղւոյն վարչութեան Առաջնորդի մը պէտքը անհրաժեշտ չի նկատելուն համար շուրջ կ'ընայ:

### ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՉԻՆԱՍՏԱՆ  
ՕՏԱՐԱԿԱՆՆԵՐՈՒ ՁԱՐԳԸ. — Տէլի-Մէյլի Շանկայի թղթակիցը հետեւեալ հեռագիրը կը

ըր կը զրկէ: Կը ցաւիմ բացարձակապէս հաստատելու որ Բէքիսի մէջ ամբողջ օտարականներու ջարդը կատարեալ իրողութիւն մէ որ տեղի ունեցաւ յուլիս 6-7 ի գիշերը:

Ամսոյս 8 ին օտարականները դուրս ելլելու փորձ մը ըրին եւ 100 Պօքարը սպաննեցին. Չինացի զորավարը սկսեց այն առեն ուժակոծել գեւապանատունները որոնց պատերը իսկոյն աւերակ եղան, օտարականները փորձեցին ամրանալ այս աւերակներուն մէջտեղ, բայց ուժակոծումը շարունակեց: Արեւուն ելած պահուն տեսնուեցաւ թէ՛ ռազմավարները սպառելու վրայ էին, եւ ժամը 7 ին Չինացի զորավարը տեսնելով որ եւրոպացի օտարականները իրենց վրայ ուղղուած կրակին չ'էին պատասխաներ, իւր զինուորները յառաջ քաշեցուց:

Հակառակ իրենց ռազմավարներու սպասման՝ օտարականները յուսահատութեամբ կուռեցան. Բայց Չինացիները այնքան բազմաթիւ էին որ իւրաքանչիւր մեռեալի տեղ երեք ուրիշներ կուղային: Չինացիները անագին կորուստներ ունենալէն վերջ ամբողջ օտարականները բռնեցին եւ ստակալի կերպով սպաննեցին:

ՕՏԱՐ ՈՒՎԵՐԸ. — Պ. Պրօտրիք ըսաւ թէ՛ թագու զրկուած կամ զրկուելիք զինուորներուն թիւը մինչեւ յուլիս 10 ը 20,700 մարդու կը հասնէին՝ հետեւալ բաժանումով: Ռուսիա 8,200 մարդ 149 սպայով: Ճարտն 5,100 մարդ 124 սպայով: Անգղիա 2,400 մարդ 175 սպայով: Ֆրանսա 2,400 մարդ 103 սպայով: Գերմանիա 1,087 մարդ 36 սպայով: Ամերիկայ 1,305 մարդ 10 սպայով երկու հատ ալ Իտալական եւ Աւստրիական պաշտիկ վաշտեր:

Երեսօրեանական ժողովոյ մէջ Պ. Պրօտրիք ըսաւ թէ՛ ֆրանսական զինուորներու կողմէ Իկլիի դրաւումը կրնայ զեղծում մը նկատուել Ֆրանքօ-Մարոքեան դաշնագրութեան: Անգլիան այս մասին հարկ չ'տեսներ առ այժմ կարծիք մը յայտնել:

Ինչպէս ըսուած է Մարոքի մասին Ֆրանսայի եւ Անգլիոյ մէջ որոշ համաձայնութիւն մը չի կայ:

Ֆրանսացիներուն կողմէ Իքլիի գրուման առթիւ՝ Անգլիան դիտողութիւն մը չ'ըրաւ. սակայն շատ անգամներ Ֆրանսական կառավարութիւնը ներկայ դրութիւնը պահելու վստահութիւնը տուած է:

ԹՈՒՐԿԻԱ. — Ֆրանքիւրը Չայթունկ պօլիսէն կը տեղեկանայ թէ՛ միւսուլման ժողովրդեան մէկ մասը նպատաւոր է Չինացի ապստամբներու, եւ ուրախ են որ այս վերջինները ազէկ դաս մը կուտան Եւրոպական հակառակութեան եւ թէ Չինացի միւսուլմանները ապստամբութեան մէջ լայն բաժին մը ունին:

Շէյխ-Իւլ-Իսլամը իրեն եղած հարցմանց ի պատասխանի ըսած է թէ՛ շատ հաւանական կը թուի իրեն որ եթէ Եւրոպական հակառակութիւնը Չինաստանի մէջ անկուժ մը կրէ, Եւրոպան պիտի յիշէ նորէն թէ՛ թրքական մեծ խնդիր մը կայ:

### Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Լոնտրա 20 Յուլիս. — Ճաբոնի մէջ հանրային կարծիքը տակաւ առ տակաւ կը գրգռուի Չինաստանի զրկուելիք նոր զինուորներուն համար, կառավարութիւնը կը

վարանի, բայց արդէն ուրիշ բաժանում մը ճամբայ ելած է :

Ուսանողները 20 Յուլիս . — Պ. Գոնտրը Բէրլինի Ամերիկեան դեսպանը՝ յուլիս 18 թուական հեռագրով մը անմիջական օգնութիւններ կը պահանջէ : Չինացիները կը ուժեղանան զեւրոպայական տնտեսները :

Լոնտոն 21 Յուլիս . — Շանի-հայի հիւպատոսները գոհութեամբ կը հաստատեն թէ ներկային համար, այս քաղաքին մէջ վրտանդ չը կայ : Ամուր գետին երկայնքը Ռուսերը լուրջ յառաջդիմութիւն կ'ընեն իրենց Չինացուց գէմ բրած գիմարութեան մէջ : Պլակովէպէնսգի ռուսկոնուրը գաղարած է :

Բարիզ 21 Յուլիս . — Չինու կայսեր մէկ հրովարտակը կ'ըսէ թէ՛ ամբողջ գիսպանները, ի բաց առեալ Գերմանականները յուլիս 17 ին ողջ էին և արքունիքին պաշտպանութեան տակ :

Ճրանասան Չինաստանի խնդրած միջամտութեան չը պիտի պատասխանէ, զեւրպաններուն կատարեալ ազատութեան վրայ երաշխաւորութիւններ ստանալէ առաջ :

Մովակալ Սէյմուր անթուական հեռագրով մը կ'ըսէ թէ՛ Չինացիները ամբողջութեամբ պարպեցին Թիէն-Չինը և չըջակայները :

Լոնտոն 21 Յուլիս . — Լորտ Ռոպըրթս Բրէթօրիայէն կը հեռագրէ թէ՛ Լինոլէյի մօտ ամսոյս 19 ին կուր տեղի ունեցաւ Տըվէթի 1500 մարդերուն և Անգլիական զօրքերու մէջ . Տըվէթ յաջողեցաւ Անգլիական զօրքերէն կազմուած շղթայէն անցնիլ : Թինա ին եւ միւրեցաւ և իւր ուժերը երկու մասի բաժնուեցան : Անգլիական կորուստները թեթեւ են :

Լոնտոն 22 Յուլիս . — Չինաստանի կայսրը հեռագրեց Գերմանիոյ կայսեր, նախագահ Լուպէյի և Մաք-Քլինի իրենց միջամտութիւնը խնդրելով ներկայ կացութեան վերջ մը գնելու համար միևնոյն ժամանակ իւր ցաւերը կը յայտնէ Գերմանիոյ կայսեր Գերմանական դեսպանին սպանման համար և կը խոստանայ պատժել ապստամբները :

Պեկին 22 Յուլիս . — Սերպիոյ Ալէքսանդր թագաւորը որբեւայրի մը հետ իր նշանախօսութիւնը ծանոյց, այս որբեւայրին նախաժամութեամբ նախկին պատուոյ տիկինն է : Իսկիւնը իւր հրաժարականը տուաւ :

Հոնոլմ 23 Յուլիս . — Իտալական դեսպանատունը Բ. դրան նոթա մը տուաւ : Նոր թարիքի մը հաստատութիւնն ի վեր շատ մը դժուարութեանց կը բաղադրուի ապրանքներու մեկնման համար տեղւոյն վկայագիրը ստանալ : Բարձր. դուռը մտադրութիւն ունի կ'ըսեն այդ վկայագիրներու վաւերացման սակը կէսի զեղծել :

Պեկին 23 Յուլիս . — Պոլիսէն կը հաստատեն թէ՛ Պիթիլիի նախկին վալի էնիզ վաչա որ հայկական ջարդերու գլխաւոր գրգռիչներէն մին էր՝ Հալէպի վալի անուանուեցաւ, ուր բազմաթիւ քրիստոնեայ ժողովուրդ կը գտնուի : Ճրանասան, Ռոսիոյ և Անգլիոյ դեսպանները բողոքեցին այս անուանման դէմ, բայց դուռը էնիզ վաչային անմիջապէս իւր պաշտօնատեղին մեկնելու հրաման տուաւ :

Բարիզ 23 Յուլիս . — Բէրլինի մէջ գտնուող դեսպաններէն ո և է նոր հեռագիր (կամ լուր) չէ հասած եւրոպայ :

Լոնտոն 24 Յուլիս . — Չոկատ մը որ թինա Լոնոն գիրքերուն զինութիւն մը կը կատարէր անոնց պատահեցաւ ոչ ինքն ինքն մօտ զօրաւոր գիրք մը գրուած էին և սաստիկ կուր մը տեղի ունեցաւ : Անգլիացիք ստիպուեցան գիշերափոխուին եւ քաշուիլ մէկ սպայ և 6 մարդ կորսնցնելով :

Սինկաբուրէն առնուած հեռագիր մը կ'ըսէ թէ՛ գէպի Չին զրկուելիք հնգկական զօրաբաժնի մը տուաւ մը տակաւին պիտի ուշանայ, Ռուսիան մէջ գտնուող 4րդ զօրաբաժնակին մէջ Քոլերա երեւան ելած ըլլալուն համար :

ՔԱՂՈՒԱԾ ՀԱՅ ԹԵՐԹԵՐԷ

— 0 —

ՀԱՅ ՎԱՐՃԱՊԵՏԻ ՄԸ ԴԱՏԸ . — Բազանդիտնի մէջ կը կարգանք հետեւեալը :

Երեքշաբթի օր 27 յուլիս, Պոլսոյ վերաքննիչ ատենի Հուգուգի ճիւղին առջեւ վերջնական լուծում ստացաւ պահանջը գատ մը, զոր տարիներէ ի վեր կը վարէր հայ վաղեմի դատարարակ Տիար Մկրտիչ Մեղպուրեան :

Յիշեալ դատարարակն իր գիշերօթիկ Սանուհիներէն երկու քոյրերու տարեթու չափներուն ի հաշիւ 84 օսմ. ոսկի պահանջ մը ունէր, որու վճարումն երաշխաւորուած էր Պրուսացի Յակոբ Ղուկասեան անձի մը կողմէ՛ յատկապէս գրուած հրամանի պօսելով մը :

Սկիւտարի Հուգուգի դատարանը նախապէս դատապարտած էր զՅակոբ Ղուկասեան յիշեալ 84 ոսկին տոկոսով և դատական ծախքով Մեղպուրեանին վճարելու : Ղուկասեան վերաքննութիւն պահանջած էր իր կողմէ փաստարան կարգեալ Գ. Չոհրապ վերաքննիչ ատենանը ներկայանալով մերժած էր նախնական դատարանին ձեռնհասութիւնը, քանի որ պօսել հրամանի գրուած է և Մեղպուրեան գիշերօթիկ վարժարան մը վարելով վաճառական կը համարուի, ուստի խնդրած էր գործին քննութիւնն, ըստ օրինի, յանձնել առեւտրական դատարանին :

Մեղպուրեանի փաստարանը Ա. Սուրէնեան պատասխանած էր ըսելով որ ինք պօսելուն շարագրական ձեւին յենելով չէ որ գատ բացած է Ղուկասեանի դէմ, այլ հիմնուելով սա կէտին վրայ թէ՛ նա գումարի մը վճարումն երաշխաւոր գտնուած է, բացի այս պարագայէն՝ կրթական հաստատութիւն մը բնաւ վաճառականական ձեռնարկութիւն չի համարուիր, հետեւաբար Հուգուգի դատարանը ձեռնհաս է գատը քննելու :

Գ. Չոհրապ պնդած էր նաև թէ՛ Ղուկասեանի երաշխաւորութիւնը բացարձակ չէր այլ թէ՛ական, այսինքն նա պարտաւոր պիտի ըլլար Մեղպուրեանի վճարել 84 ոսկին այն ատեն, երբ բուն պարտականներուն վերաբերեալ դրամ մը իր ձեռքն անցնէր : Սուրենեան մերժած է երաշխաւորութեան թէ՛ականութիւնը՝ յայտնելով թէ՛ պօսել ին մէջ թէ՛ութիւնն չ'էր պարունակէր :

Վերաքննիչ ատենանը, յետ խորհրդակցութեան, մերժելով Գ. Չոհրապի դատարանի ձեռնհասութեան մասին ըրած առարկութիւնները, յայտարարեց թէ՛ Հուգուգի դատարանը իրաւունք ունի գատը քննելու և այլն և այլն :

Ստեանը երկու կողմերուն թեր ու գէմ առարկութիւնն ու պաշտպանողական իր լուրէ յետոյ՝ ջնջեց իւր նախապէս տուած որոշումն և դատապարտեց զՂուկասեան 84 ոսկին ծախքերով և այլն վճարելու :

20,000 ԲՈՒՐՈՒԻ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ ՄԸ . — Արեւելք լրագրէն հետեւեալը կը քաղենք . — Կալիթայէ Արգարեանց հուշակաւոր առեւտրական տան ներկայացուցիչները 26 յուլի (մտաւարապէս 65000 ֆրանկ) յանձնել են Հնգկաստանի կառավարութեան աւանդապահին, այլեւայլ բարեգործական նպատակի համար վերջերս առնուած տեղեկութեանց նայելով նոյն առեւտրական տան կողմէ 20,000 ռուբլի նոր նուիրատուութիւն մ'ալ կատարուեր է ի յիշատակ իրենց հանգուցեալ ազգական Պ. Սեթ Յարութիւն Արգարեանի : Այս երկու նուիրատուութիւնը պիտի նպատեն եկեղեցեաց և աղքատներու, և ինչպէս յիշեալ թերթը կը յայտնէ՝ կը կարծուի որ Արգարեան տունը յիշեալ նուիրատուութեանէն զատ մտադիր է նուիրատուութիւն մ'ալ ընել սոսկ կրթական յարկերու համար :

Տե՛ս, որպիսի գեղեցիկ հայելի մը, յորում սը հարուստ և Ազգ. գործոց անտարբէր հայր որ նայի, շատ ազեղ պիտի տեսնայ իւր երեսը . անձնամուրթիւնը աւանական կեանք մէ, որոյ կուտմն է գրտածը ուտել, և գոնէ սակարի մը կտոր ալ չ'ստալ իւր նմանին :

Մաղթենք՝ որ Արգարեանք իրենց շատ մը հետեւողներ ունենան :

— Շարժում ի Կ . Պոլսոյ թղթակիցը կը գրէ թէ՛ կարմիր կնիքի մը պատճառաւ (անշուշտ յեղափոխական կնիք մը ըլլալու է) 150 հոգիի չափ նոր ձեռքակալութիւններ տեղի ունեցած են :

Հինգ հոգի բնիկ պոլսեցիներ Ղարաթարապուս աքսորուած են . 40 ի չափ Ռոտտոթոցիներ իրենց ծննդավայրը քշուած են :

— Պէհա պէյ հիւանդագին վիճակի մէջ Ատանայէն պոլիս վերադարձած՝ և հոն մինակ Պահրի փաշան մնացած է : Շարժումի թղթակիցը մնացելոյն համար կը մաղթէ միևնոյն ցառօք . . . :

— Կիլիկիոյ Կաթողիկոսական խնդիրը յայտնի է թէ, հակառակ եղած խոստումներուն, դեռ շատ ուշ պիտի գտնէ իր լուծումը :

ԱՆԾԱՆՕԹ ԱՆԿԻՒՆԸ

(Շարն . նախորդ թիւէն և վերջ)

Սօսակի Արեւմտեան կողմը մի քանի ազօրեքներով վերջացած է իսկ Արեւելեան կողմը նեղոս գետով . որուն զանազան գնացքը Եզերքի ծառուղիները . զիմացի արմաւենիներու անտառածե ակարը . իրարմէ քիչ հեռաւորութեամբ կարգաւորուած մանր գիւղերը . գետին վրայ առաջատաները պարզուած նաւակներ, որոց վերցցուած կայմերը անտառներու նմանութիւնը կը բերեն և ցամաքին վրայ հեծելանիւններով ուրախ գուարթ երթեւեկութիւնները կերպով մը Հայաստանի մանրանկարը կը ներկայացնեն և Հայերու սրտին մէջ Հայրենիքի յիշատակներ կ'արթնցնեն . և անս ճիշտ այս տեսարանին վրայ է որ 97 թուականին վերջերս Մեծ Տեարց Մաթոսեան և Սարգիսեան բնիկութեանց գաշնակցութեամբ հիմնուած է ծխախոտի գործարան մը Գէորդ Սարգիսեան և բնկ. անուամբ :

ուր 15 ի մաս հայեր (ի բաց առեալ ընտանեաց 20 է աւելի անդամները) բազմը ունեցած ենք պատասխարուիլ եւ ուրիշ կը հայթայթուի Ասիոյ միջին Սուլթանի ամեն կողմերը բազմաթիւ ծիսախոտի մեծամասնութիւնը որ ծըխողները գրեթէ առանց բացառութեան գոհունակութիւն կը յայտնեն տեսակաց պատրաստութեան ընտրութեան եւ կշիռքի ճշգրտութիւնը ամենակազմներէ վեր ըլլալուն համար :

Փորձարանի վարչութիւնը յանձնուած է Տ. Տ. Սիմէոն եւ Լեւոն Սարգիսեաններու, առաջինը տեսուչ եւ երկրորդը փոխաւորը ուրախալի է յիշատակել որ շատ հեզամտօրէն բնաւորութիւն կը կրեն եւ իրենց ազդեցութեան տակ գտնուելու պատիւը ունեցող Ազգայիններուն հանդէպ կարեկից վերաբերութիւններ դրնին որով առժամանակեայ մոռցնել կ'ուտան մեր տարազրուած գրութեան վիշտը եւ ի պահանջել հարկին օրինակ կը հանդիսանան մեզ այս ու այն Ազգային հաստատութեանց կամ ձեռնարկութեանց օժանդակելով կը բաւէ որ գիտեմք ընտղները վստահելի անձեր լինին . ի սրտէ կը մտղթենք որ ստանդական մեր բոլոր ցեղակիցները որոնք անձնական միջոցներէ զուրկ այլոց ծառայելու տրամադրութեանց մէջ են գործառնելէն նոյն կարեկցութիւնը վայելելու բազմը ունենան . իսկ Մաթոսեան եւ Քէրոզ Սարգիսեան Տեառն թշուառներու հանդէպ գործնականապէս մէկէ շատ աւելի անդամներ ապացուցուած բարի կամեցողութիւններու գրուատուր թողով աւելի կարող եւ մօտէն տեղեակ անձանց . կ'աւելցնեմ թէ մենք ալ նոս մեր կարգին անդամաւոր կորուստ մը ունեցանք յանձին Քրիզոր Առաքելեանի որ 3-4 ամիսներ առաջ Պուլիարիոյ Ռուստոք քաղաքէն աստ գալով Տիար Սիմոն Սարգիսեանի նիւթական օգնութեամբը յանձնարարութիւն կ'ընէր , զփրկողաբար ամսոյ 3 ին անակնկալ հիւանդութեամբ մը իւր մահկանացուն կ'ընէր 50-52 տարեկան հասակին մէջ . որ յաջորդ օրը ամենատարուր տպաւորութեան տակ Յունական ծէսով հողին յանձնեցինք քաղաքէն մէկ ժամ հեռու Ապախներուն գերեզմանատունը :

Տ. Ս

ՀՅԵՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

Table with 6 columns: Year, and five numerical columns showing population statistics for 1900.

ՀԱՒԱՔԱԾՈՅ

ՀԱՅՈՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԿԵՐՈՒՄ

ՏՆՕՐԷՆ Լ. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ — ԲԱՐԻՁ
Ականաւոր եւ հեղինակաւոր երաժիշտներու աշակցութեամբ եռաձայն եւ քառաձայն պատրաստուած սոյն հաւաքածոյէն գնել փափաքողներն կամ բաժանորդագրուիլ ուղղորդեն, կրնան դիմել Արշալոյսի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ Հիմնադիր-Տնօրէնին :

Տիար Մ. Հայկունի Բարից ուղեւորելէն պատճառաւ , իւր հրատարակած «Վարագոյր Մարդկային Կենաց» գրքին սակաւթիւ օրինակներն յանձնած է Արշալոյսի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ : Գնել փափաքողք կրնան հոն դիմել :
Գանի մը օրինակ մէկ անգամէն գնողին 20 առ հարիւր զեղջ կը լինի :

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

ՆՈՐԱԿԱԶՄ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

«ԱՐՇԱԼՈՅՍԻ»

ՀԻՄՆԵԱՂ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻԼ ԱԶԻԶԻ ՍԿԶԲԸ

Օտանկի ղեղարանին ղիւնացի փողոցին մէջ .

Տպարանը բաց պիտի ըլլայ ամեն օր, առաւօտեան ժամը 7 էն մինչեւ երեկոյեան ժամը 8 :

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ մէջ, մաքուր եւ ճաշակաւոր պատրաստուելու պայմանաւ, կ'ընդունուին .

Այցեխարտեր, Երջարեւակներ, Գիտեր, Հրաւիրագրեր, Մանագրեր, Տեղեկագիրներ, Կանոնագրեր, Տոմար եւ այլ եւ այլ վաճառականական յանձնարարութիւններ :

Ամենակատարեալ ճշդապահութիւն եւ չափաւոր գին :

ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՆԻՒԿ ԵՆ :

ԿՈՊԵՌ ՊԵՆԼԵԱՆ

ԵՒ ԸՆԿԵՐ .

ՆՈՐ ԼՈՒԱՆԿԱՐՁԱՏՈՒՆ ԵՒ ՆԿԱՐՁԱՏՈՒՆ

Տաներիւ տարիներ շարունակ կարեւոր շուսանկարչատուններու մէջ աշխատելով, արհեստին ամեն ճիւղերը լաւ մշակած եւ փորձառութիւն ստացած է :

Պըտոյ մէջ Ապտուլլահ եղբարց տան, ինչպէս եւ ուրիշ մի քանի ծանօթ տուններու, քաղաքի մէջ վերլին անգամ Լէքէճեան գործատան մէջ ամենակարեւոր պաշտօնը վարած, այժմ առանձին գործատեղի մը կը հիմնէ Էօզպէի իյէ Եարիս Գաւնէյ Օթէ-Լ ԵԷԲԷՐՏՍԻ ճիշտ գիմաց թիւ 3 արարթըմանին երրորդ յարկը, ուր կը պատրաստէ լուսանկարներ, ինչպէս եւ դուրսը կուտիներ ի հարկին :

Ակրանսիւման բնական մեծութեամբ : Կենդանագիրներամերիկեան մեքենայով որոնք երբէք չեն աւրուիր :

Գունաւոր լուսանկարներ ամեն մեծութեամբ բնական գոյներով միլետարիտ : Իւզաներկ եւ շրաներկ պատկերներ եւ լուսանկարի եւ պատկերահանութեան վերաբերեալ յանձնարարութիւններ կ'ընդունի ռըքրոշ, սեփէշոքրիւս եւ ըն :

Իրեն դիմող յաճախորդներն հանել տուած լուսանկարներուն հետ միեւնոյնէն գունաւոր մը նուէր պիտի ստանան, որ նորութիւն մէ :

Սկրանսիւման բնական մեծութեամբ : Կենդանագիրներամերիկեան մեքենայով որոնք երբէք չեն աւրուիր : Գունաւոր լուսանկարներ ամեն մեծութեամբ բնական գոյներով միլետարիտ : Իւզաներկ եւ շրաներկ պատկերներ եւ լուսանկարի եւ պատկերահանութեան վերաբերեալ յանձնարարութիւններ կ'ընդունի ռըքրոշ, սեփէշոքրիւս եւ ըն :

Տ Հ Ի Մ Ի Զ Ո Ւ Ա Լ Լ Ա Յ Ց

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍԵԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ ԵՐԱՇԵԱՒՈՐԵԱԼ ԳՐԱՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները :

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ինպատարեանց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ոչորիշ օր եւ է ընկերութեան մէկ միլիար աւելի է :

Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ

ՏՕՐԹ. Ա. Յ. ԳԵՐԵՍՍԻՒՆ

Ի Եարիս Գոթ-Պէյ, թիւ 20

Իր ՉԻԻ խորհրդակցութիւնները ասկից վերջը, միայն ուրբաթ օրերը կես օրէ առաջ ժամը (ը. ե. ) 9 էն 11 սրոշած ըլլալով կը խնդրէ մեզմէ ծանուցանել զայդ, ի գիտութիւն իրեն դիմել ուղղ աղքատ հիւանդներու :

Գ Ա Ֆ Է Մ Օ Ք Ա

Տիգրան Կոտանեան պատիւ ունի ծանուցանել Արդոյ հասարակութեան թէ՛ վերջերս սկսած է իւր Փազար-Մրուրի խանութին մէջ պատրաստել Ենմէնի տուրմի ամենաբարձր եւ անխորհրդաւ տեսակէն իրեն դիմող յաճախորդներ օխան 16 շրջ ողջի հաշուով, զուտ Բաժէ պիտի կրնան գնել կշռոյ մէջ ալ ուղղաճութիւն գտնելով :

ԳՐԵ ԱՅՁՈՂՆԵՐՈՒՆ

Գահիրէի եւ չրվակայից գրասէր Հայ հասարակութեան գիւրութիւն մը տալու մտօք կը ծանուցուի թէ Հայերէն ամեն զիւր, (Դասական, Գրոցական, Գիտական, Գրական Արուեստական, Բանասիրական, Վիպական եւ այլն) որ հրատարակուած են եւ կը հրատարակուին Պուլիս, Իզմիր, Երուսաղէմ, Թիֆլիզ, Վենետիկ ու Վիեննա, կարելի է գիւրամտելի պայմաններով ձեռք բերել՝ դիմելով Տիար Կ. Նաւասարգեանի, Գալստեան վարժարան Հայոց ի Գահիրէ :

ՏՕՐԹ. ԺՈՐԺ Փ. ԷՎԼԻԱՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՏԱՄԱՐՈՅԹ Ապսիւն Եարա Գոպարի Թիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու եւ հասակի յարմար ընտիր ապրանքներով կեղծակոաներ :

Կը գաղթեցնէ վայելեանապէս ակուայի ցաւերը, ամերիկեան նորագոյն մեթօտով իւր պատրաստած դեղերով :

Կը բուժէ լինտերու եւ բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն :

Իր լեցուցած ակուաններուն տոկունութիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երաշխաւորէ :

Վկայեալ աղքատներու ճրի գարմանում, ամեն օր կէսօրէ ետք ժամը 3-5 :

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ օր եւ է ընկերութեան աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ եւ հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի եւ աւելի ապահովագրի կը գանձէ : ԱԼԷԲՈՒՍ ԱՎԻՉՈՆ գլխաւոր գործաւ կատար յԱզեքանդերա :